Կարգապահական գործ թիվ 17083

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի փետրվարի 15-ի թիվ 25-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/18-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հրանտ Գևորգյանի (արտոնագիր՝ 440) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

01.08.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 27.07.2017թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում կամ Դատական սանկցիա),** որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 27-ի դատական նիստում պաշտպան Հրանտ Գևորգյանը Դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որը պայմանավորված է եղել նրանով, որ պաշտպանը բանավեճի է բռնվել Դատարանի հետ, առանց Դատարանի թույլտվության կատարել է անզուսպ հայտարարություններ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ, այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 01.09.2017թ. թիվ 256-Ա/ԿԳ-17083 որոշմամբ փաստաբան

Հրանտ Գևորգյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

06.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել և Խորհրդի նիստին չի ներկայացել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև խորհրդի կողմից քննության ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

06.11.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն թիվ ԵԷԴ/ 0050/01/17 քրեական գործով 2017թ, հուլիսի 27-ին Դատարանի կողմից կայացված դատական սանկցիա կիրառելու մասին որոշման մեջ նշված է, որ փաստաբանն անզուսպ արտահայտություններ է արել՝ բանավեճի բռնվելով Դատարանի հետ, մինչդեռ Դատարանի որոշումից հասկանալի չէ, թե ինչ հայտարարությունների մասին է խոսքը, ինչով է պայմանավորված եղել փաստաբանի կողմից նման հայտարարություններով հանդես գալը և այլն: Նախապատրաստողը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրեն լրացուցիչ բացատրություններ, պարզաբանումներ չեն ներկայացվել, ինչպես նաև չի ներկայացվել 27.07.2017 թվականի դատական նիստի ձայնագրառման կրիչը, եզրակացրել է, որ փաստաբան Հրանտ Գևորգյանի կողմից Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում թույլ տալու վերաբերյալ որևէ հետևություն անել հնարավոր չէ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 07.11.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի փետրվարի 15-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Դատարանի կողմից 27.07.2017թ. կայացվել է Դատական սանցիա կիրառելու մասին որոշում, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 27-ի դատական նիստում պաշտպան Հրանտ Գևորգյանը Դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որը պայմանավորված է եղել նրանով, որ պաշտպանը բանավեճի է բռնվել Դատարանի հետ, առանց Դատարանի թույլտվության կատարել է անզուսպ հայտարարություններ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ, այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը:

Նշված փաստը հաստատվում է դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հրանտ Գևորգյանը փաստաբան է հանդիսանում 29.06.2005թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 8 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (2 ավարտված վարույթ և 6 ընթացիկ վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը: Փաստաբանը չմարված տույժեր չունի:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հրանտ Գևորգյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև,* ***<u>պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:</u>*** *Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է ենթարկվել (...) դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին, դատական նիստում պահպանել կարգուկանոն:*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ Կանոնագիրքը և քրեադատավարական օրենսդրությունը փաստաբանի համար սահմանել են դատարանում սահմանված վարվելակերպի կանոններին ենթարկվելու, դատավորին հարգանքով վերաբերվելու, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին ենթարկվելու, դատական նիստում կարգուկանոն պահպանելու պարտականություն: Մինչդեռ, փաստաբանի՝ նման պարտականություն կրելը որևէ կերպ չի չեզոքացնում նրա հնարավորությունը՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Ուստի դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը գնահատելու և Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշները պարզելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել դատարանում փաստաբանի վարքագծի դրսևորումները, ներառյալ՝ դատարանի նկատմամբ դրսևորած գործողությունների, կատարված արտահայտությունների բնույթն ու բովանդակությունը՝ պարզելու համար, թե արդյոք փաստաբանը որոշակի վարքագիծ դրևորելով կամ արտահայտություններ կատարելով դուրս է եկել դատարանի դահլիճում արտահայտվելու ազատության և դատավորի գործողությունների դեմ առարկելու թույլատրելի շրջանակներից:

Սույն գործի հանգամանքներից հետևում է, որ դատարանը փաստաբան Հրանտ Գևորգյանի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա, որը պայմանավորված է եղել նրանով, որ պաշտպանը բանավեճի է բռնվել Դատարանի հետ, առանց Դատարանի թույլտվության կատարել է անզուսպ հայտարարություններ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ, այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը:

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը*:

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի*:

Ղեկավարվելով վերոգրյալ իրավական նորմերով և հիմք ընդունելով սույն կարգապահական գործում առկա փաստական տվյալները՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Դիմողի կողմից չեն ներկայացվել Դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ վկայակոչված՝ փաստաբան Հրանտ Գևորգյանի վարքագծին վերագրվող բավարար ապացույցներ: Մասնավորապես, Դիմողի կողմից սույն կարգապահական գործի շրջանակներում չի հիմնավորվել այն հանգամանքը, որ փաստաբան Հրանտ Գևորգյանը դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, պայմանավորված Դատարանի հետ բանավեճի բռնվելով, առանց Դատարանի թույլտվության անզուսպ հայտարարություններ կատարելով, չնայած Դատարանի կողմից նախազգուշացվելուն՝ նույնանման վարքագիծ դրսևորելը շարունակելով, անհարկի խոչընդոտելով, դատական նիստի բնականոն ընթացքը խաթարելով, մինչդեռ նշված փաստի ապացուցման պարտականությունը Կարգի վկայակոչած կանոնի համաձայն կրում էր հենց Դիմողը: Խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական գործի նյութերում առկա՝ դատական սանկցիա կիրառելու մասին որոշումն ինքնին որևէ կերպ չի կարող համարվել բավարար ապացույց՝ փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշները գնահատելու համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը*:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում այդպես էլ չհիմնավորվեցին իր կողմից վկայակոչած հանգամանքները, ուստի տվյալ պայմաններում չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար, սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետով, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 01.09.2017թ. թիվ 256-Ա/ԿԳ-17083 որոշմամբ Հրանտ Գևորգյանի (արտոնագիր՝ 440) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Սեդրակ Ասատրյան**

15 փետրվարի 2018թ.
թիվ ԿԳ/18-Ա
ք. Երևան